ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

"17" Դեկտեմբեր 2023թ. N 844-Ա

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻՑ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԴՐՈՂՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության տարածքից ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների և ուղեբեռների միջպետական փոխադրումների իրականացման կարգը հաստատելու մասին» N 1587-Ն որոշման հավելվածի 17-րդ կետի 9-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության Վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 659-Լ որոշման 19-րդ հոդվածի 20-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով 2023 թվականի ապրիլի 25-ին կայացած Հայաստանի Հանրապետության տարածքից միջպետական ավտոբուսային կանոնավոր փոխադրումներ իրականացնող Հայաստանի Հանրապետության փոխադրողների ընտրության մրցույթի հանձնաժողովի գնահատման թերթիկները՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության տարածքից միջպետական ավտոբուսային կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող Հայաստանի Հանրապետության փոխադրողների ընտրության 2023 թվականի ապրիլի 25-ին կայացած մրցույթի արդյունքները՝ ըստ գնահատման ամփոփ թերթիկի՝ համաձայն հավելվածի:

2. «Երևան-Թեհրան» միջպետական երթուղու սպասարկման համար 62,3 ընդհանուր միավորով, որպես հայկական փոխադրող, հաղթող ճանաչել «Տաթև SSS» ՍՊ ընկերությանը՝ «Հիգեր» մակնիշի 200 CC 62, 200 DD 62 և 200 XX 62 հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցներով՝ սահմանելով սպասարկման չորս տարի ժամկետ, մեկ ուղևորի համար 20000 դրամ փոխադրավարձով:

3. «Երևան-Դոնի Ռոստով» միջպետական երթուղու սպասարկման համար 51 ընդհանուր միավորով, որպես հայկական փոխադրող, հաղթող ճանաչել «Պեգաս-Տրանս»

ՍՊ ընկերությանը՝ «Մերսեդես-Բենց» մակնիշի 29 CC 099, 02 IT 001 հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցներով՝ սահմանելով սպասարկման երկու տարի ժամկետ, մեկ ուղևորի համար 22000 դրամ փոխադրավարձով:

4. «Երևան-Սանկտ Պետերբուրգ» միջպետական երթուղու սպասարկման համար 49 ընդհանուր միավորով, որպես հայկական փոխադրող, հաղթող ճանաչել «Ֆորսաժ Ավիա» ՍՊ ընկերությանը՝ «Մերսեդես-Բենց» մակնիշի 800 GG 10, 01 VV 108 և «Սետրա» մակնիշի 94 II 444 հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցներով՝ սահմանելով սպասարկման երեք տարի ժամկետ, մեկ ուղևորի համար 45000 դրամ փոխադրավարձով:

5. «Երևան-Եկատերինբուրգ» միջպետական երթուղու սպասարկման համար 45,4 ընդհանուր միավորով, որպես հայկական փոխադրող, հաղթող ճանաչել «Ֆորսաժ Ավիա» ՍՊ ընկերությանը՝ «Նեոպլան» մակնիշի 35 ZQ 055, 070 DO 01, 070 OV 01 հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցներով՝ սահմանելով սպասարկման երեք տարի ժամկետ, մեկ ուղևորի համար 50000 դրամ փոխադրավարձով:

6. «Երևան-Բավրա-Նինոցմինդա», «Երևան-Բավրա-Ախալցիխե», «Երևան-Կալուգա», «Երևան-Սարատով», «Երևան-Սարատով–Սամարա-Կազան», «Երևան-Նիժնի Նովգորոդ», «Երևան-Սոչի», «Երևան-Մինեռալնիե Վոդի», «Երևան-Օրենբուրգ», «Երևան-Սամարա» միջպետական երթուղիների սպասարկման համար հայտեր չեն ներկայացվել, հետևաբար երթուղիների մրցույթները համարել չկայացած:

7. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Արմեն Սիմոնյանին:

5/15/2023

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: SANOSYAN GNEL 1710830069 **Գ. ՍԱՆՈՍՅԱՆ**

ք. Երևան

Ձև № 7

Հավելված

ՀՀ տարածքային կառավարման և

ենթակառուցվածքների նախարարի

<< >> _____ 2023թ.

N _____ հրամանի

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓ-ԹԵՐԹԻԿ

25 ապրիլի 2023թ.

(մրցույթի անցկացման օրը)

Կազմակերպության անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը	Դրամական գնահատականը			
	նախկինացված ավտոբուսների	վարորդների աշխատանքային փորձի	խախտումների առկայության	ընդամենը
<< Տաթև ՏՏՏ>> ՍՊԸ	<< Երևան - Թեհրան >>			
	34,3	8	20	62,3
<< Պեգաս-Տրանս >> ՍՊԸ	<< Երևան – Դոնի Ռոստով >>			
	23	8	20	51
<< Ֆորսաժ Ավիա >> ՍՊԸ	<< Երևան – Սանկտ Պետերբուրգ >>			
	25	4	20	49
<< Ֆորսաժ Ավիա >> ՍՊԸ	<< Երևան - Եկատերինբուրգ >>			
	22,7	2,7	20	45,4

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ _____ (ստորագրությունը) Խաչիկ Սողոմոնյան (անունը, ազգանունը)